ՄԱՐՍԵԼԱ ՍԱՐԳՍՅԱՆ
Հաշվապահական հաշվառում
և հարկում, բակալավրիատ, 3-րդ կուրս

ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *կանանց ձեռնարկատիրություն, ընտանիք և բիզնես, շարժառիթ, խոչընդոտ*

Սույն հոդվածում ուսումնասիրվում է Հայաստանում կանանց ձեռնարկատիրությունը՝ դիտարկելով թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձ հանդիսացող կին ձեռներեցների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունները, նրանց առջև ծառացած խոչընդոտները: Բացահայտվել է, որ հայաստանյան ձեռնարկատիրության մեջ կանանց ներուժի օգտագործումը սերտորեն փոխկապված է հայկական հոգեկերտվածքի, ֆինանսական միջոցների ներգրավման, իրազեկվածության, կանանց կրթության, ընտանեկան հոգսերի և այլնի հետ:

Ներածություն: Դարերի ընթացքում ձևավորվել է այն կարծրատիպը, թե ձեռնակատիրությունը տղամարդկանց «մենաշնորհն» է: Սակայն, կանանց մասնակցությունը երկրի տնտեսության զարգացմանն այնքան ակնհայտ էր, որ շատ երկրներ համոզվեցին, որ կանանց ներգրավվածությունն ուղղակի ազդեցություն է ունենում տնտեսության աճի վրա: Այս կախվածությամբ էլ կանխորոշվեցին գիտական հետազոտությունները՝ ուղղված կանանց ձեռնարկատիրության զարգացման միտումների, հնարավորությունների և խոչընդոտների բացահայտմանը: Եվ քանի որ Հայաստանում կանայք կազմում են բնակչության կեսը, ուստի անչափ կարևոր է կատարել ուսումնասիրություններ՝ բացահայտելու, իսկ արդյունքում հայ կնոջ անձնական, մտավոր և գիտական հնարավորություններն ուղղորդելու հայրենական տնտեսության զարգացմանը:

Կին ձեռնարկատիրոջը կարելի է բնորոշել որպես համարձակ ու վստահ, նախաձեռնող անձնավորություն, որն ունակ է հասնելու տնտեսական անկախության՝ ընտանեկան հարաբերություններից զատ, աշխատանքային հարաբերություններ ստեղծելով աշխատավայրում: Ինչ խոսք, խրախուսելի է կանանց այն մղումը, որ սեփական բիզնեսով ցանկանում են թեթևացնել ընտանիքի սոցիալական վիճակը՝ գործի դնելով իրենց իմացությունը, հնարավորություններն ու հմտությունները:

Նորություն չէ, որ ձեռնարկատիրական գործունեությունը ռիսկ է ներառում, հետևաբար՝ ձեռնարկատերը պետք է լինի ոչ միայն նախաձեռնող, այլև համարձակ՝ հնարավոր կորուստը դիմագրավելու «հանդգնությամբ» օժտված: Իսկ եթե խոսքը կանանց ձեռնարկատիրության մասին է, ապա նրանց ներգրավվածությունն առավել ուշագրավ է:

Հայաստանում կանանց ձեռներեցության ուսումնասիրությունը միտված է բացահայտելու այն գործոնները, որոնցով պայմանավորված է հայ կանանց ձեռներեցության համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, իսկ վերջինս կնպաստի նաև ներդրումների ներգրավմանը:

Ճիշտ է, կանանց ձեռնարկատիրության վերաբերյալ կան որոշ հետազոտություններ, սակայն այս արդիական թեման թերի է ուսումնասիրված Հայաստանում, քանի որ մշտական բացահայտման կարիք ունեն այն խնդիրները, որոնց բախվում են կին ձեռներեցները Հայաստանում, առավել ևս, ամբողջությամբ հայտնի չեն աջակցման ուղղությունները և իրավական կարգավորումները:

Գրականության ակնարկ: Ձեռնարկատիրությունը միշտ էլ ռիսկ է ներառել, որի մասին ամրագրված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում. «Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույքն օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է»[1]: Սակայն, այդպիսի գործունեություն նախաձեռնելու համար անձին անհրաժեշտ են մի շարք ունակություններ՝ ինտուիցիա, բարձր ինտելեկտ, կամքի ուժ և այլ հատկանիշներ: Իսկ կանայք ունեն այդ ներուժը, որն ամբողջությամբ չի օգտագործվում. «Ինչպես ցույց տվեցին բազմաթիվ այլ ուսումնասիրություններ, կանանց ձեռներեցությունը զբաղվածությունն ավելացնելու, բարիք ստեղծելու և ընդհանրապես՝ տնտեսական զարգացման թերգործադրված ներուժ է»[2]:

Մի շարք հետազոտողների ուսումնասիրությունների համայնապատկերը փաստում է, որ «Կանանց համար ձեռնարկատիրության խոչընդոտները ձևավորվում են կնոջ մասին որպես տնային տնտեսուհու, օջախի պահապանի, մոր պատկերացումներով, ուստի այդպիսի ստերեոտիպերի հաղթահարման համար անհրաժեշտ է պետական քաղաքականություն»[3]: Այսպիսի դիրքորոշում ունի նաև մեկ այլ հետազոտող, ըստ որի՝ «Ակնհայտ է, որ կանանց ձեռներեցության արդյունավետությունը գերազանցապես պայմանավորված է նրա ընտանիքի անդամների վերաբերմունքով»[4]:

Կարծում ենք, որ ձեռնարկատեր կանանց գործունեությունն առավելապես պայմանավորված է ընտանիքի սոցիալական խնդիրների լուծմամբ և հետո միայն ինքնադրսևորման մղումով և կապիտալի առկայությամբ, թեպետ որոշ հետազոտողներ այլ հաջորդականություն են նշում. «Կանանց ձեռնարկատրության առաջնային գործոններն են. եկամուտ ստեղծելը, ինքնաիրացումն ու կրթությունը, և հետո միայն մեկնարկային կապիտալի առկայությունը և մարդկանց կառավարելու կարողությունը»[5]:

---

[1] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք՝ ընդունված 05.05.1998 թ., բաժին 1, գլուխ 1, հոդված 2:

[2] Միջազգային ֆինանսական կորպորացիա, Կանանց ձեռներեցությունը Հայաստանում, 2020 թ. նոյոմբեր, էջ 8:

[3] **Шмелева А.Н., Алгада Х.**, Женское предпринимательство в России и за рубежом: обзор проблем развития, Компетентность/Competency (Russia)., 2020, № 8. DOI: 10.24411/1993-8780-2020-10802, с. 25, file:///C:/Users/User/Downloads/zhenskoe-predprinimatelstvo-v-rossii-i-za-rubezhom-obzor-problem-razvitiya.pdf

[4] **Ершова И.В.**, Женское предпринимательство: от эмпирики и доктрины к правовому регулированию, Частное право, том 75 N8(189) 2022 август, с. 14, https://cyberleninka.ru/article/n/zhenskoe-predprinimatelstvo-ot-empiriki-i-doktriny-k-pravovomu-regulirovaniyu/viewer

[5] **Коробова, О.О.**, Социально-экономические факторы развития женского предпринимательства, «Современные наукоемкие технологии. Региональное приложение» №2 (62) 2020, с. 36, file:///C:/Users/User/Downloads/sotsialno-ekonomicheskie-faktory-razvitiya-zhenskogo-predprinimatelstva.pdf

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության ընթացքում մշակվել է հարցաթերթիկ, որի հիման վրա կատարված հարցումների (դեմ-հանդիման, հեռախոսային, համացանցային) արդյունքում հավաքագրվել են անհրաժեշտ տվյալներ: Հոդվածում կիրառվել են հետազոտության երկու հիմնական՝ քանակական և որակական մեթոդները, իսկ երբեմն նաև՝ խառը մեթոդը:

Վերլուծություն, հետազոտության արդյունքներ և քննարկում: Մինչ կանանց ձեռնարկատիրության հնարավորությունների և խոչընդոտների բացահայտմանն անցնելը, ներկայացնենք 2022 թ. վիճակագրական տարեգրքի՝ աշխատանքի շուկայի ուսումնասիրությունից որոշ տվյալներ: Այսպես. 2019 թ. բնակչության ընդհանուր թվաքանակում կանայք կազմում են 52.7%, իսկ աշխատանքային ռեսուրսներում՝ 53.5%, 2020 թ. բնակչության ընդհանուր թվաքանակում կազմում են 52.8%, աշխատանքային ռեսուրսներում՝ 54.1%: 2021 թ. պատկերը նույնն է. կանանց տեսակարար կշիռը 52.8% է, իսկ աշխատանքային ռեսուրսների կառուցվածքում՝ 54.8% (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***Կանանց կառուցվածքը բնակչության թվաքանակում և աշխատանքային ռեսուրսներում (2019-2021 թթ.)***[1]

Հարկ է անդրադառնալ նաև 2022 թ. վիճակագրական տարեգրքում ներկայացված ՀՀ աշխատանքային ռեսուրսներին՝ կանանց տարիքային կազմից ելնելով: Ինչպես ակնառու է եռապատկեր 2-ում, ամենամեծ տեսակարար կշիռն ունեն 55-64 տարեկան և 25-34 տարեկան կանայք՝ համապատասխանաբար 21.6 և 18.4%:



Գծապատկեր 2. ***Աշխատանքային ռեսուրսները՝ ըստ կանանց տարիքային կազմի (2021 թ.)***[1]

[1] Գծապատկերներ 1, 2, 3-ը կազմվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի Հայաստանի 2022 թ. վիճակագրական տարեգրքի տվյալների հիման վրա, Աշխատանքի շուկայի բաժին, էջ 77, https://armstat.am/file/doc/99533253.pdf

Քանի որ ձեռներեցությունը պահանջում է որոշակի գիտելիք, հետևաբար ներկայացնենք նաև կանանց աշխատանքային ռեսուրսները՝ ըստ ստացած կրթության մակարդակի՝ դարձյալ վկայակոչելով 2022 թ. վիճակագրական տարեգրքի տվյալները: Ինչպես ակնառու է գծապատկեր 3-ում, Հայաստանում կանանց զգալի մասն ունի միջնակարգ կրթություն՝ 38,6%, բարձրագույն կրթություն ունի 28.4%-ը, միջին մասնագիտական կրթություն՝ 25.5%-ը, իսկ միջնակարգից ցածր կրթություն՝ 7.5%-ը:



Գծապատկեր 3. ***Կանանց աշխատանքային ռեսուրսները՝ ըստ կրթական մակարդակի (2021 թ.)***[2]

Ներկայացնենք հարցված (թվով 52) ձեռնարկատեր կանանց՝ ըստ ղեկավարած կազմակերպությունների չափերի, այսինքն՝ խոշոր, միջին, փոքր կազմակերպությունների և միկրոձեռնարկատիրության (գծապատկեր 4): Գծապատկերից ակնառու է, որ հարցված կանանց սեփականություն հանդիսացող ընկերությունների գերակշիռ մասը՝ 40.1%-ը, միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ են, փոքր կազմակերպություններ ղեկավարում է հարցված կանանց՝ 29.7%-ը, միջին կազմակերպություններ՝ 23.9%-ը, իսկ խոշոր կազմակերպություններ ղեկավարում է հարցվածների 6.3%-ը: Հիշյալ ցուցանիշները փաստում են, որ խոշոր և միջին կազմակերպությունների մեծ բաժինը ղեկավարում են տղամարդիկ:



Գծապատկեր 4. ***Կանանց ձեռնարկատիրությունը՝ ըստ կազմակերպությունների չափերի (Ք=52)***

[1] Գծապատկերներ 1, 2, 3-ը կազմվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի Հայաստանի 2022 թ. վիճակագրական տարեգրքի տվյալների հիման վրա, Աշխատանքի շուկայի բաժին, էջ 77, https://armstat.am/file/doc/99533253.pdf

[2] Նույնը:

Կարևոր ենք համարել ուսումնասիրել հարցված կանանց ձեռնարկատիրությունը՝ ըստ տնտեսական ոլորտներին պատկանելության: Նշենք, որ կանայք ամենամեծ տնտեսական գործունեություն ծավալում են ծառայությունների (պետական կառավարման, կրթության, առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման) ոլորտում՝ 35%, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ՝ 21.9%, առևտրում՝ 15.9%, արդյունաբերության մեջ՝ 10.2% և այլ ոլորտներում ՝ 17% (գծապատկեր 5):



Գծապատկեր 5. ***Կանանց զբաղվածությունը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների (Ք=52)***

Հետաքրքրություն է ներկայացնում նաև Հայաստանում կանանց ձեռնարկատիրության տևողությունը: Ինչպես ներկայացված է գծապատկեր 6-ում, այն բավականին երիտասարդ է. հարցված կանանց ձեռնարկությունների 34.4%-ը (ամենամեծ տեսակարար կշիռը) գործունեություն է ծավալում 4-6 տարի, 19,8%-ը՝ 7-10 տարի, 15.4%-ը՝ 1-3 տարի, 13.4%-ը՝ 11-15 տարի և միայն 17%-ը՝ ավելի քան 15 տարի:



Գծապատկեր 6. ***Կանանց ձեռնարկատիրության տևողությունը (Ք=52)***

Կարևոր ցուցանիշ է նաև ձեռնարկատեր կանանց ընտանեկան կարգավիճակը և երեխաների առկայությունը: Ամուսնացած կանանց տեսակարար կշիռը հարցվածների թվում կազմել է 71.5%, ընդ որում՝ ամուսնալուծվածները

կամ այրիները կազմում են հարցվածների 13%-ը, մնացածը չամուսնացածներն են (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. ***Ձեռնարկատեր կանանց ընտանեկան կարգավիճակը (Ք=52)***

Անդրադառնանք կանանց՝ բիզնես սկսելու շարժառիթներին (գծապատկեր 8): Այսպես. հարցված կանանց 63.8%-ի համար գումար վաստակելու շարժառիթն առաջնային է, որին հաջորդում է «Այլ աշխատանք կամ եկամտի աղբյուր գտնելու անկարողությունը» (30.7%) և «Նախկին փորձը կամ կրթությունը գործադրելու ձգտումը» (17.4%):



Գծապատկեր 8. ***Կանանց՝ բիզնես սկսելու շարժառիթները (Ք=52)***

Որքան էլ ընտանիք-բիզնես հարաբերությունը դժվար է պահպանել, այնուամենայնիվ, հայ կանայք գտել են ճիշտ համամասնությունը: Հայաստանում ընտանիքի անդամներն առհասարակ սատարում են սեփական բիզնես ունենալու՝ կանանց նախաձեռնությանը: Մեր կողմից հարցվածների մեծ մասը՝ 80.1%-ը, պատասխանել է, որ ընտանիքի անդամներից կամ հարազատներից ստացել է անհրաժեշտ աջակցություն, իսկ հարցվածների 10.3%-ը նշել է, որ չի ստացել, և միայն 1.6%-ն է, որ հրաժարվել է պատասխանել (գծապատկեր 9):



Գծապատկեր 9. ***Ընտանիքի աջակցությունը կանանց բիզնեսին (Ք=52)***

Հարցումների արդյունքում բացահայտել ենք նաև այն խոչընդոտները, որոնց բախվում են կին ձեռնարկատերերը: Պատկերը հետևյալն է. Ֆինանսական միջոցների հասանելիությունը կամ հայթայթումն ամենամեծ խոչընդոտն է՝ 38.8%, աշխատուժի թերկրթվածությունը՝ 33.5%, ժամանակի պակասը՝ 22.3%, հարկային դրույքաչափերն ու հարկային վարչարարությունը միասին՝ 23.9% (գծապատկեր 10):



Գծապատկեր 10. ***Խոչընդոտները՝ ըստ կին ձեռնարկատերերի (Ք=52)***

Եզրակացություն: Ամփոփելով նշենք, որ ձեռնարկատիրությունը կանանց համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն է, թեև կանայք պատրաստ են այն կրել՝ ունենալով մի շարք մտավախություններ՝ կապված աշխատանքային ռեսուրսների հայթայթման, հարկերի վճարման, հաշվապահական հաշվառման վարման բարդության, կառավարման հմտությունների, սկզբնական կապիտալի բացակայության, կենցաղային հոգսերի, երեխաների խնամքի և այլնի հետ: Այդուհանդերձ, կանանց ձեռնարկատիրության իրավական կողմը Հայաստանում ձևավորված չէ:

Փաստ է, որ կանանց ձեռնարկատիրության զարգացումն ապահովելու համար պետական աջակցություն է անհրաժեշտ թե՛ իրավական, թե՛ ֆինան-

սական մակարդակով: Մասնավորապես. իրավական ակտերում անհրաժեշտ է ներառել կանանց ձեռնարկատիրության վերաբերյալ իրավական ձևակերպումներ և այնպիսի կարգավորումներ, որոնք ոչ միայն կպաշտպանեն կանանց ձեռնարկատիրությունը, այլև զարկ կտան ներդրումների ավելացմանը: Բացի դրանից, պետության կողմից պետք է մշակվեն կին ձեռնարկատերերին ուղղակի ֆինանսական աջակցության ծրագրեր (միկրովարկեր), ինչպես նաև կանանց ձեռնարկատիրության զարգացման դրամաշնորհներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք՝ ընդունված 05.05.1998 թ., բաժին 1, գլուխ 1, հոդված 2:
2. Միջազգային ֆինանսական կորպորացիա, Կանանց ձեռներեցությունը Հայաստանում, 2020 թ. նոյեմբեր, էջ 8:
3. Шмелева А.Н., Алгада Х., Женское предпринимательство в России и за рубежом: обзор проблем развития, // Компетентность / Competency (Russia)., 2020, № 8. DOI: 10.24411/1993-8780-2020-10802, file:///C:/Users/User/Downloads/zhenskoe-predprinimatelstvo-v-rossii-i-za-rubezhom-obzor-problem-razvitiya.pdf
4. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր, 2022, Աշխատանքի շուկա բաժին, https://armstat.am/file/doc/99533253.pdf
5. Ершова И.В., Женское предпринимательство: от эмпирики и доктрины к правовому регулированию, Частное право, том 75 N8(189) 2022 август, с. 14, https://cyberleninka.ru/article/n/zhenskoe-predprinimatelstvo-ot-empiriki-i-doktriny-k-pravovomu-regulirovaniyu/viewer
6. Коробова О.О., Социально-экономические факторы развития женского предпринимательства, «Современные наукоемкие технологии. Региональное приложение» №2 (62) 2020, file:///C:/Users/User/Downloads/sotsialno-ekonomicheskie-faktory-razvitiya-zhenskogo-predprinimatelstva.pdf

МАРСЕЛА САРГСЯН

Бухгалтерский учет и налогообложение, бакалавриат, 3-й курс

ВОЗМОЖНОСТИ И ПРЕПЯТСТВИЯ ЖЕНСКОГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА В АРМЕНИИ

Ключевые слова: *женское предпринимательство, семья и бизнес, мотивация, препятствие*

В данной статье изучается женское предпринимательство в Армении с учетом возможностей предпринимательской деятельности женщин-предпринимателей как физических, так и юридических лиц и препятствий, с которыми они сталкиваются в ходе своей деятельности.

В результате проведенного исследования было выявлено, что использование женского потенциала в армянском предпринимательстве тесно связано с армянским менталитетом, привлечением финансовых ресурсов, осведомленностью, женским образованием, семейными заботами и т.д.

MARSELA SARGSYAN
3rd year Bachelor, Department of Financial Accounting

OPPORTUNITIES AND OBSTACLES TO WOMEN'S ENTREPRENEURSHIP IN ARMENIA

Keywords: *women's entrepreneurship, family and business, motivation, obstacles*

In this article, women's entrepreneurship in Armenia is studied, taking into account the possibilities of entrepreneurial activity for women entrepreneurs who are physical or legal entities in Armenia and the obstacles faced during their activity.

The article revealed the use of women's potential in Armenian entrepreneurship, which is closely related to the Armenian mentality, inclusion of financial resources, awareness, women's education, family concerns, etc.

ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
Ֆինանսներ, բակալավրիատ, 3-րդ կուրս

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *աղքատություն, տնտեսական աճ, Ջինիի գործակից, խորություն, սրություն, անհավասարություն, ՀՆԱ*

Սույն հոդվածում ներկայացրել ենք աղքատության բնորոշումը, օր օրի վատթարացող աղքատության պատկերն ու փորձել գտնել դրա վրա ազդող գործոնները: Հետազոտության ընթացքում հանդիպեցինք հետևյալ խնդիրներին՝ մեկ շնչի հաշվով դրամական եկամուտներն ու սպառողական ծախսերն աճում են ոչ համամասնորեն, աղքատության խորությունն ու սրությունը աճում են, որին զուգահեռ մեծանում է եկամուտների ու սպառման անհավասարությունը ներկայացնող Ջինիի գործակիցը: Ինչպես նաև, վերջին տարիներին մեծանում է «աղքատության մեջ հայտնվելու ռիսկի շեմ» համարվող հարաբերական աղքատության մակարդակը, և քանի որ գնաճի ազդեցությունը աղքատության մակարդակի վրա մեծ է, փոփոխվում են աղքատության միջազգային գծերը, ինչը մեծացնում է աղքատության մակարդակը:

Առկա անհավասարությունը որպես աղքատության կրճատման մեծագույն խոչընդոտ համարելով՝ կարծում ենք, որ առաջնահերթ պետք է վերանայել անհավասարության վերացմանն ուղղած ծրագրերն ու միջոցառումները:

Ներածություն: Բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է տվյալ երկրում աղքատության մակարդակը: Այն շոշափում է կյանքի տարբեր կողմերը՝ սպառում, առողջություն, կրթություն, իրավունքներ՝ ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության և արժանապատիվ աշխատանքի իրավունքը: Աղքատությունը երկրի դժվարագույն վիճակն է, որը տարբեր ժամանակներում ու երկրներում ունեցել է տարբեր բնութագրումներ: Այն արտահայտում է եկամուտների, սպառման և ծախսերի ցածր մակարդակը, սոցիալական ծառայությունների ցածր մատչելիությունը՝ հասարակության տեսակետից անհրաժեշտ նվա-